Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

Մասիս քաղաքային համայնքի բյուջեի վարչական մասում անհրաժեշտություն է առաջացել կատարել հետևյալ փոփոխությունները.

COVID19-ով պայմանավորված՝ բժշկական ցուցումով ինքնամեկուսացված՝ սննդամթերքի և սանիտարահիգենիկ պարագաների կարիք ունեցող անձանց աջակցություն ցուցաբերելու նպատակով Արարատի մարզպետարանի հետ կնքվել է ընթացիկ դրամաշնորհի հատկացման պայմանագիր 366 254 դրամի չափով՝ 65 անձանց համար, որը ներառվել է բյուջեի եկամտային և ծախսային մասերում: Ինքամեկուսացվածների թվի ավելացման հետ կապված կնքվել է համաձայնագիր, ըստ որի ինքնամեկուսացվածների թիվը կազմել է 116, գումարը՝ 653 623 դրամ: Առաջարկվում է բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել համապատասխան փոփոխություն ընթացիկ դրամաշնորհի հատկացման տարբերության՝ 287 369 դրամի չափով:

Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող՝ մոտավոր 180 միավոր հողամասերի մասնագիտական չափագրման ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ՝ 460 000 դրամի չափով:

Մասիսի ՔԿԱԳ-ի էներգետիկ ծախսերի համար նախատեսված միջոցները չեն բավարարում մինչև տարեվերջ ծածկելու ծախսերը, որը նախատեսված է եղել հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի կատարված ծախսը: Անհրաժեշտ է լրացուցիչ 25 000 դրամ հատկացնել ՔԿԱԳ-ի էներգետիկ ծախսերին:

Մասիսի քաղաքապետարանի դիմացի այգու բեմահարթակը քայքայվել է և կարիք ունի ընթացիկ նորոգման, որի համար շուկայի ուսումնասիրությունից պարզվել է, որ անհրաժեշտ կլինի 940 000 դրամ:

Մասիս քաղաքի 2-րդ թաղամասի 2-րդ փողոցի թիվ 55 տան բնակիչ Արտյոմ Բարսեղյանի սեփականություն հանդիսացող 105 թև հավերը թափառող շների կողմից ոչնչացվել է, քաղաքացուն պատճառելով զգալի նյութական վնաս: Ա. Բարսեղյանը դիմել է քաղաքապետարան՝ պատճառված վնասը որոշակի չափով վերականգնելու աջակցության խնդրանքով: Փաստի վերաբերյալ ս/թ հուլիսի 14-ին կազմվել է արձանագրություն ստեղծված հանձնաժողովի կողմից:

Առաջարկվում է թույլատրել՝ 100 000 դրամ հատկացնել սոցիալական հատուկ արտոնությունների այլ նպաստներ հոդվածին՝ Արտյոմ Մարտիրոսյանին աջակցելու համար:

Վերոնշյալ ընթացիկ ծախսերը իրականացնելու համար առաջարկվում է 2020թ. բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների՝ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածով՝ ուսանողների տրանսպորտային փոխադրման համար նախատեսված միջոցները նվազեցնել 1275 000 դրամով, այն ուղղելով վերոնշյալ ծախսերին:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի իրացումից մուտքերի տարեկան առաջադրանքը 2020թ. օգոստոսի 31-ի դրությամբ նախատեսվածից ավելի է կատարվել 21389,2 հազար դրամով, որն անհրաժեշտ է ներառել բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում և ուղղել կապիտալ աշխատանքներին:

Համայնքում կապիտալ աշխատանքներ իրականացնելու համար ձեռք է բերվել փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվային աշխատանքների փաթեթներ:

Համաձայն ձեռք բերված նախագծա-նախահաշվային փաթեթների՝ համայնքի 2020 թվականի բյուջեի ֆոնդային մասում անհրաժեշտ է հատկացնել միջոցներ հետևյալ շինարարական աշխատանքների համար .

1. Մասիսի քաղաքապետարանի վարչական շենքի տանիքի, աշխատասենյակների և դահլիճի հիմնանորոգման համար՝ 85 972,8 հազար դրամ.
2. Մասիս քաղաքի 1-ին շենքի դիմացի այգու հիմնանորոգման համար՝ 22500,0 հազար դրամ.
3. Մասիս քաղաքի 5-րդ դպրոցի հարակից ֆուտբոլի դաշտի հիմնանորոգման համար՝ 56 400,36 հազար դրամ.
4. Մասիս քաղաքային համայնքի 1-3-րդ փողոցների շարունակության, 1-10-րդ փողոցների փակուղիների, 1-7-րդ թաղամասերի, Մասիս Կայարանի մի հատվածի արտաքին լուսավորության ցանցի անկացման համար՝ 135 491,72 հազար դրամ.
5. Մասիս քաղաքի Նոր թաղամաս 32 շենքի բակի բարեկարգման համար՝ 5 303,52 հազար դրամ:

Ընդհանուր կապիտալ աշխատանքների ձեռք բերման համար անհրաժեշտ է 305668,4 հազար դրամ, որը առաջարկվում է հատկացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վարչական սարքավորումների ձեռք բերման հոդվածից 284279,2 հազար դրամ և համայնքի սեփականություն հանդիսացող հողերի իրացումից մուտքերից 21389,2 հազար դրամ:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան

Հավելված 1
Համայնքի ավագանու
,,__11__,, ___09___,, 2020 թ. Թիվ ____ որոշման

Մասիս քաղաքային համայնքի 2020 թվականի բյուջեի
վարչական մասի եկամուտների և ծախսերի վերաբաշխումը

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Ծախսեր Գումարի չափը / հազար դրամ/	Եկամուտներ /հազար դրամ/
1				***Ընթացիկ դրամաշնորհների մասով եկամուտներն ավելացնել***			***287.369***
2	01	6	1	***Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.*** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածով ՝ տրարանսպորտային ծառայությունների համար նախատեսված միջոցները նվազեցնել	4239	-1275.00	
3				Հատուկ նպատակային այլ նյութեր հոդվածն ավելացնել	4269	37.369	
4				Չափագրման ծառայություններ ձեռք բերելու համար նախատեսված միջոցներն ավելացնել	4241	460.000	
5	01	3	1	**Աշխատակազմի գծով ընդհանուր բնույթի ծառայություններ.** ՔԿԱԳ-ի էներգետիկ ծախսերն ավելացնել	4212	25.00	
6	10	7	1	**Այլ նպաստներ.** Մասիս քաղաքի բնակիչ Արտյոմ Բարսեղյանին՝ վնասի հատուցման նպատակով սոցիալական աջկցություն տրամադրելու համար՝ Այլ նպաստներ հոդվածը ավելացնել	4729	100.00	
7	08	1	1	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Քաղաքապետարանի դիմացի այգու բեմի ընթացիկ նորոգում	4251	940.00	
				Ընդամենը		***287.369***	***287.369***

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն.Սահակյան

Հավելված 2
Համայնքի ավագանու
,,__11 _,, ___09___,, 2020 թ. Թիվ ____ որոշման

Մասիս քաղաքային համայնքի 2020 թվականի բյուջեի ֆոնդային մասի եկամուտների և ծախսերի վերաբաշխումը

հ/հ	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Ծախսեր Գումարի չափը /հազար դրամ/*	*Եկամուտներ Գումարի չափը /հազար դրամ/*
				Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի իրացումից մուտքերն ավելացնել			***21389.200***
1	**1**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.**վարչական սարքավորումների ձեռք բերում հոդվածը պակասեցնել	5122	-284279.200	
2	**01**	**1**	**1**	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Մասիսի քաղաքապետարանի վարչական շենքի տանիքի, աշխատասենյակների և դահլիճի հիմնանորոգում	5113	85972.800	
3	**06**	**1**	**1**	**Բնակարանային շինարարություն.**Մասիս քաղաքի թիվ 1 շենքի դիմացի այգու հիմնանորոգում	5113	22500.000	
4				Մասիս քաղաքի Նոր թաղամաս 32 շենքի բակի բարեկարգում	5113	5303.520	
5	**06**	**4**	**1**	**Փողոցների լուսավորում.** Մասիս քաղաքային համայնքի 1-3-րդ փողոցների շարունակության, 1-10-րդ փողոցների փակուղիների, 1-7-րդ թաղամասերի, Մասիս Կայարանի մի հատվածի արտաքին լուսավորության ցանցի անկացում	5112	135491.720	
6	**08**	**1**	**1**	**Հանգիստ և սպորտ.** Մասիս քաղաքի 5-րդ դպրոցին հարակից ֆուտբոլի դաշտի հիմնանորոգում	5113	56400.360	
				Ընդամենը		***21389.200***	***21389.200***

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն.Սահակյան